ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան,Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2021/05-2 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի արդյունքում 2021թ ապրիլի 19-ին կնքված պայմանագրերում կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ:	Ապրանքների մատակարարման ժամկետի երկարացում:
Փոփոխության նկարագրություն	Ապրանքների մատակարարման ժամկետի երկարացում:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 04.05.2021թ. թիվ 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետ և Կողմերի միջև 19.04.2021թ. թիվ ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2021/05-2 պետական գնման պայմանագրի 8.5 և 8.6 կետեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Փառանձեմ Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010 59-00-47

Պատվիրատու՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 19.04.2021թ. ԿՆՔՎԱԾ N ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2021/05-2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «06» սեպտեմբեր 2021թ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ն. Մելքումյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Մուսայելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը և Կողմերի միջև 19.04.2021թ. կնքված N ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2021/05-2 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրով նախատեսված ապրանքների (3-րդ և 4-րդ չափաբաժիններ) մատակարարման ժամկետը երկարաձգել 15 օրացուցային օրով, ինչով պայմանավորված «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» վերտառությամբ Հավելված 1-ում, ապրանքների «մատակարարման ժամկետը» սյունյակներում «20 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «35 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Ք. Երևան Վ.Սարգսյան 3/3 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011038248 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար Ն. Մելքումյան _____ /ստորագրություն/ Կ.Տ.	«ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ Ք. Երևան, Աբովյան, 66-10 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570048268610100 ՀՎՀՀ 02684635 տնօրեն Հ. Մուսայելյան _____ /ստորագրություն/ Կ.Տ.